

«Մարքեթինգային հաղորդակցություններ» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Մարքեթինգային հաղորդակցություններ» (Marketing Communications) մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է մագիստրոսներին գիտելիքներ փոխանցել գովազդային գործունեության կառավարման էության, մեխանիզմի և սկզբունքների, իրադարձությունների մարքեթինգի և անհատների բրենդավորման գործընթացի կազմակերպման և առաջխաղացման ուղղությունների, հասարակության հետ կապերի, ներդրմարքեթինգի և իրացման խթանման գործիքների, ինչպես նաև ուղղակի մարքեթինգի (Direct Marketing) գործիքների, մասնավորապես դրանց ընտրության, կիրառման և արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումների վերաբերյալ:

Շրջանավարտին շնորհվում է «Կառավարման մագիստրոսի» որակավորում: Ծրագիրը մշակվել է մագիստրոսական ուսուցման համակարգում համանման մասնագիտացում շնորհող միջազգային առաջատար բուհերի ծրագրերի և Մարքեթինգի ամերիկյան ասոցացիայի, Նյու Քեմբրիջի պետական համալսարանի «Ռութգերս» բիզնես դպրոցի ծրագրերի համադրման հիման վրա:

Ծրագրի տևողությունը 2 տարի է, դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ, ժամը 14:00-18:30-ը: Մասնագիտական դասընթացներից հետո մագիստրոսը համապատասխան փորձառություն պետք է անցնի առաջատար ընկերությունների մարքեթինգի ստորաբաժանումներում:

Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներգրավվելու են մարքեթինգի ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետները: Ակնկալվում է նաև ՀՀ առաջատար կազմակերպություններից հրավիրյալ մասնագետների ներգրավում, ինչպես նաև՝ ուսանողների մասնակցություն ոլորտի բազմաբնույթ միջոցառումներին: Դասապրոցեսներն անցկացվելու են գործնական բնույթ ունեցող աշխատանքների հիման վրա՝ արտացոլելով ուսանողների՝ թիմերում աշխատելու կարողություններն ու արագ կողմնորոշվելու ունակությունները: Ուսման վճարը մեկ տարվա համար 570,000 ՀՀ դրամ է: Երկու տարվա ուսումնառության արժեքը կկազմի 1,140,000 ՀՀ դրամ:

Մասնագիտության նկարագիր

«Մարքեթինգային հաղորդակցություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը պատրաստում է մարքեթինգային հաղորդակցությունների կազմակերպման և

կառավարման վերաբերյալ գործնական գիտելիքներով և կարողություններով մասնագետների, որոնք ունեն մեծ պահանջարկ աշխատաշուկայում՝ մասնավոր, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, գիտական, նախագծային կազմակերպություններում, տարբեր ուսումնական հաստատություններում:

Ներկայումս աշխատաշուկայում առկա է այնպիսի մասնագետների պահանջ, ովքեր խորությամբ տիրապետում են նորագույն մոտեցումներով մարքեթինգային հաղորդակցությունների իրականացմանը, ինչպես նաև ունեն տնտեսության և բիզնեսի կազմակերպման և կառավարման իմացություն:

Կրթական ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով ամերիկյան բուհերի փորձը, մասնագիտական չափանիշներին համապատասխան և նպատակաուղղված է մասնագետների պատրաստմանը, որոնց պահանջարկը մարքեթինգային գործունեության ոլորտում տարեցտարի աճում է: Շրջանավարտներն աշխատաշուկայում կարող են զբաղեցնել մարքեթինգային գործունեություն և մարքեթինգային հաղորդակցություններ իրականացնող առաջատար ընկերությունների այնպիսի հաստիքներ, որոնք պահանջում են առավել խորը մակարդակի մարքեթինգային, տնտեսագիտական, կառավարման և բիզնեսի գործունեության համաժամանակյա տիրապետման ունակություններ:

Տվյալ ծրագրի շրջանակում մարքեթինգային գործունեության ոլորտի առաջատար կազմակերպությունների և ընկերությունների հետ հաստատված է սերտ համագործակցություն՝ ուսանողների փորձառության վայրի և հետագա աշխատանքի տեղավորման խնդիրների հարցում: